ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
պարոն Մ. Անանյանին

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի փող, 3-րդ նրբ, 3-րդ շենք)

«ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով կազմակերպված
ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար
վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման,
գործարկման և կարգաբերման աշխատանքներ

ԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բողոքը քննող անձ, հիմք ընդունելով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից 17.12.2018թ. ներկայացրած բողոքի (ԳԲԿ-ԱՄ-2018/110) շուրջ բողոքը քննող անձի 27.12.2018թ. կատարած որոշումը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով կազմակերպված ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չեղյալ է հայտարարել 30.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը, ինչպես նաև՝ 06.12.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետով ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը սահմանված կարգով «ԳԼՈԲԱԼ ԼԻՖՏ ԿՈՄՊԼԵԿՏ» ՍՊԸ-ին է տրամադրել մեկ աշխատանքային օր «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկում կատարելու համար համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի: Վերջինիս արդյունքում հանձնաժողովը սահմանված ժամկետներում ստացել է համապատասխան տեղեկատվություն /շտկում/ ՍՊԸ-ի կողմից: Տվյալ պահին մրցույթը գտնվում է գնահատման փուլում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Սարգսյան